ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի*
*Նոր Խարբերդ համայնք, Բաղրամյան 10,*
*հեռ. /0236/ 60030, էլ. փոստ.norkharberd@mail.ru*

# ՈՐՈՇՈՒՄ

*« 29 » հոկտեմբերի 2012թվականի N 12*

## ՄՇՏԱԿԱՆ /ԱՆՀԱՏՈՒՅՑ/ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ և 32-րդ հոդվածի 12-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 794 - Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին » N 1072- Ն և «Հողերի կատեգորիան փոխելու մասին» N 793 – Ն որոշումների պահանջներով և «Մոնթե Մելքոնյան թանգարան » հիմնադրամի դիմումը՝*

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

*1. Մոնթե Մելքոնյանի տուն- թանգարանի կառուցման ծրագիրը իրականացնելու նպատակով «Մոնթե Մելքոնյան թանգարան » հիմնադրամին մշտական /անհատույց/ օգտագործման տրամադրել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքի սեփականություն հանդիսացող 03-070-0242-0002 ծածկագրի տակ հաշվառված, Երևան - Արտաշատ խճուղու թիվ 131/1 հասցեի բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման 0.62 հեկտար հողամասը:*

*2. «Մոնթե Մելքոնյան թանգարան » հիմնադրամի հետ կնքել հողամասի մշտական / անհատույց / օգտագործման պայմանագիր:*

*Կողմ /9/ Դեմ/0/ Ձեռնպահ/0/*

ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱԽԱՆՅԱՆ

ԵՐՎԱՆԴ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՇՈՏ ԱՐՇԱԿՅԱՆ

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՍԱՏՈՒՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ՆԵՐՍԵՍՅԱՆ

ԳՈՌ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԺԱՆ-ՊԻԵՌ ՔԼՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible]ԱՆ

*03801359*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի*
*Նոր Խարբերդ համայնք, Բաղրամյան 10,*
*հեռ. /0236/ 60030, էլ. փոստ.norkharberd@mail.ru*

## *ՈՐՈՇՈՒՄ*

*« 29 » հոկտեմբերի 2012թվականի N 13*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով՝*

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.*

*Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի 2012 թվականի վարչական բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.*

*4.2.1 «Գյուղատնտեսություն » ծրագրի 4111 /աշխատավարձ և հավելավճարներ / հոդվածից պակասեցնել 480.0 հազար դրամ, 4131 /սոցիալական ապահովության վճարներ/ հոդվածից պակասեցնել 120.0 հազար դրամ, դրանք ուղղելով՝*

*ա/ 6.4.1. «Փողոցների լուսավորում» ծրագրի 4251 /շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում/ հոդվածին՝ 290.0 հազար դրամ,*

*բ/ 11.1.2«Պահուստային ֆոնդ» ծրագրի 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածին՝ 310.0 հազար դրամ:*

*Կողմ /9/ Դեմ/0/ Ձեռնպահ/0/*

*ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱԽԱՆՅԱՆ*
*ԵՐՎԱՆԴ ԱՎԵՏԻՍՅԱՆ*
*ԱՇՈՏ ԱՐՇԱԿՅԱՆ*
*ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*
*ԱՍԱՏՈՒՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ*
*ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ*
*ՄԱՆՎԵԼ ՆԵՐՍԵՍՅԱՆ*
*ԳՈՌ ՎԱՐԴԱՆՅԱՆ*
*ԺԱՆ-ՊԻԵՌ ՔԼՈՅԱՆ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

*03801359*